

A 13.00.01
Ա ԿԼ-65

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇԻԿՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՅԻ ԱՇՈՏԻ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և
պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2009

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների
դոկտոր **Ն.Կ.ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների
դոկտոր **Ս.Պ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների
թեկնածու **Գ.Վ.ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2009թ. հոկտեմբերի 22-ին ժամը
14⁰⁰-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական հա-
մալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՂ-ի 020 մաս-
նագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայ-
կական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2009թ. սեպտեմբերի 22-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու՝

Ա.Ա.ՅԵԳԿՅԱՆԵՍՅԱՆ



3694-2009

ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն ազգ, էթնոս, էթնիկական խումբ ունի ազատ ապրելու իրավունք, և սա
միջազգային իրավունքի համապարտադիր սկզբունք է: 20-րդ դարը նշանա-
վորվեց ազգերի ազատ ինքնորոշման միջազգային սկզբունքի հաղթարշավով:
Այս առումով բացառություն չէ նաև կովկասյան տարածաշրջանը, մասնավորա-
պես՝ Հայաստանի Հանրապետությունը: Համակարգային փոփոխությունների
ուղին ընտրած, շուկայական հարաբերություններով կարգավորվող տնտեսա-
վարման շրջանում գտնվող նորաստեղծ, անկախ ու ինքնիշխան մեր երկիրը
որոշ ձեռքբերումների հետ մեկտեղ ստիպված է հաղթահարել իր առջև ծառա-
ցած բազմաթիվ ու բազմաբնույթ դժվարություններ: Խորքային փոփոխություն-
ների են ենթարկվել գրեթե բոլոր կառույցները, այդ թվում նաև կարևորագույն
սոցիալական կառույցներից մեկը՝ ընտանիքը:

Սոցիալ-տնտեսական, հասարակական վերափոխումներն իրենց ետևից բե-
րել են ընտանիքի նկատմամբ հասարակության և պետության նոր պահանջներ,
որոնք դրսևորվել են ինչպես որակական, այնպես էլ կառուցվածքային փոփո-
խություններով:

Հանդիսանալով մարդու անձի ձևավորման և սոցիալականացման կարևո-
րագույն միկրոմիջավայրը՝ ընտանիքը դիտվում է ոչ միայն որպես ազգի կա-
յացման և զարգացման կարևոր գործոն, այլև հասարակության կողմից ար-
ժևորված գիտելիքների ու կարողությունների, բազմաբնույթ հետաքրքրու-
թյունների, քաղաքացիական դիրքորոշման, մարդասիրական փոխհարաբերու-
թյունների սկզբնաղբյուր: Ուստի այս համատեքստում կարևորվում է ընտանե-
կան դաստիարակության դերն ու նշանակությունը անձի ձևավորման, նրա հա-
մակողմանի և ներդաշնակ զարգացման գործում՝ տնտեսավարման նոր համա-
կարգի պայմաններում:

Սույն ատենախոսության մեջ փորձ է արվել վեր հանել ու վերլուծել «ըն-
տանիք» սոցիալական կառույցում տեղ գտած ժամանակակից հիմնախնդիր-
ները, նրա գործառնության փոփոխությունները, միջանձնային հարաբերու-
թյուններում առկա բախումները, երեխայի դաստիարակության հետ կապված
խնդիրները, ինչպես նաև ներկայացնել այսօրվա ազատ շուկայի պայման-
ներում արժեքային համակարգի վերարժեքավորման գործընթացը: Պատմա-
կան այս շրջադարձային ժամանակաշրջանում հենց ընտանեկան դաստիարա-
կության նշյալ հիմնախնդիրների լուսաբանմամբ ու վերլուծությամբ է պայմա-
նավորված ատենախոսության թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

Մանկավարժության պատմության մեջ ընտանեկան դաստիարակության
հիմնահարցերի ուսումնասիրմամբ զբաղվել են խորհրդային շրջանի հայ և
մասնավորապես ռուս շատ գիտնական-մանկավարժներ, /Վ.Հացունի, Ս.Սու-
քիասյան, Գ.Հարությունյան, Յու.Պ.Ազարով, Ս.Յու.Մեչչերյակովա, Ռ.Բ.Օվչարո-
վա, Ս.Սիբիրյակով, Պ.Սորոկին, Գ.Գ.Առակելովա, և այլոք/, որոնք խորությամբ
ուսումնասիրել են ժամանակաշրջանի «ընտանիք» սոցիալական կառույցը ոչ
միայն որպես պետության և հասարակության ամրության կարևոր պատվար,
այլև նրա մեծ դերը սերունդների դաստիարակության գործում:

Այսօր էլ արտասահմանյան տարբեր երկրներում, Ռուսաստանում և նաև
Հայաստանում ընտանիքը շարունակում է մնալ հոգեբանական, մանկավար-

ծական և սոցիոլոգիական ուսումնասիրությունների օբյեկտը /Ն.Յարությունյան, Ա.Նալչաջյան, Ա.Ամիրյան, Յու.Գասպարյան, Ի.Պրոկոպև, Տ.Կուլիկովա, Մ.Կոլյադա, Ի.Դորբյակով, Մ.Գալազուզովա, Օ.Պրոխորովա, Ռ.Բայարդ, Օքսվորդի համալսարանի գիտնականներից՝ Յիդեր Վայս, Մարգարետ Կասպե, Ելենա Լուպեզ, Չենրի Կոպե/, քանի որ ընտանիքը եղել և մնում է հասարակության ամենակարևոր սոցիալական ինստիտուտը, որի դերակատարությունը վճռորոշ է մարդու սոցիալականացման գործընթացում:

Սակայն վերջին 18 տարիների /1991-2008թթ./ ընթացքում Հայաստանում քաղաքական, տնտեսավարման նոր համակարգերի պայմաններում «ընտանիք» կառույցի վերաբերյալ չեն կատարվել ամբողջական ուսումնասիրություններ: Մեր աշխատանքը գալիս է լրացնելու այդ բացը:

Միաժամանակ փորձ է արվել ներկայացնել հանրապետության անցած ավելի քան 18 տարիների սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի վերափոխումների պատմությունը, ինչպես նաև վերջիններիս անմիջական ներգործությունը ընտանիքում միջանձնային հարաբերությունների կարգավորման, երեխայի անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացների վրա:

Ատենախոսության խնդիրը կարևորվում է նաև նրանով, որ այսօր բուռն կերպով ընթանում է ազգային արժեքների վերարժեքավորման գործընթաց, և ընտանիք են ներթափանցում մեր ազգին անհարիր երևույթներ, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում ինչպես ընտանիքի ամրության, այնպես էլ ազգի պահպանման և պարտնման համար: Եվ մեր խոր համոզմունքը խարսխված է մի պարզ ու անառարկելի ճշմարտության վրա. հայ ազգը, հայ ընտանիքը կանգուն և անառիկ է եղել և կլինի իր ազգային արժեքների, ավանդույթների և սովորույթների շնորհիվ: Նոր արժեքները շունչ ու ոգի կստանան միայն ազգային հենքի վրա:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ �ՊԱՏԱԿԸ

Տեսական և գործնական վերլուծությունների հիման վրա վեր հանել ու վերլուծել ընտանեկան դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրները մեր երկրում տնտեսավարման նոր համակարգի պայմաններում՝ առաջադրելով դրանց լուծման նոր ուղիներ ու եղանակներ:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ

Այսօրվա «ընտանիք» սոցիալական կառույցն է՝ հնի ու նորի խաչմերուկում, իր գործառույթներով ու հիմնախնդիրներով:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ընտանիքի՝ հասարակության առաջնային սոցիալական կառույցի կառուցվածքի, կենսագործունեության, գործառույթների, ներընտանեկան միջանձնային հարաբերությունների, երեխաների ընտանեկան դաստիարակության ժամանակակից հիմնահարցերն են տնտեսավարման նոր համակարգի պայմաններում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Մեր հանրապետությունում ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրները կունենան արդյունավետ լուծում, և ընտանիքը նորից կվերագտնի իր կորցրած արժեքները, եթե.

- Երկրում մշակվի սոցիալական կայուն քաղաքականություն,
- Կարգավորվեն բնակչության զբաղվածության և գործազրկության հարցերը,
- Մշակվեն արտագնացության, բնակչության տեղաշարժը կասեցնելու հստակ ծրագրեր,

- Մշակվեն համապարփակ ծրագրեր մանկական թափառաշրջիկությունը, մուրացկանությունը, օրինախախտումները վերացնելու և կանխարգելու համար,
- Ստեղծվեն ընտանիքին աջակցելու հոգեբանամանկավարժական կենտրոններ,

- Պետական և հասարակական ջանքերով պաշտպանվեն երեխաների իրավունքներն ու օրինական ազատությունները,
- Ստեղծվեն երեխայի առողջության պահպանման, նրա ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ,
- Աճող սերնդին դաստիարակել ազգային, բարոյական արժեքների ոգով՝ դրանք հարաբերակցելով համամարդկային արժեքներին:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ �ՊԱՏԱԿՈՎ ՕՐՅԵԿՏՈՎ, ԱՌԱՐԿԱՅՈՎ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ ԵՆ ՅԵՏԵՎՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Հետազոտել ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրների գնահատման ժամանակակից մոտեցումները և դրանց ազդեցությունը անձի ձևավորման գործընթացում:
2. Վերլուծել «ընտանիք» սոցիալական կառույցի գործառույթային փոփոխությունները, ծնող պատճառները:
3. Ուսումնասիրել արժեքների վերարժեքավորման գործընթացը հասարակությունում և նրա ազդեցությունը ներընտանեկան միջանձնային հարաբերությունների և երեխաների դաստիարակության գործառույթի վրա:
4. Հետազոտել երեխայի դաստիարակության հիմնախնդիրները տնտեսավարման նոր համակարգի պայմաններում:
5. Նորովի մեկնաբանել սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքների բնութագիրը, պատճառահետևանքային կապերը:
6. Ուսումնասիրել երեխայի դաստիարակության գործում ընտանիք-դպրոց-հասարակություն կառույցների համագործակցության ձևերն ու ուղիները:
7. Կազմել հարցարան և սոցիոլոգիական հարցումներ անցկացնել ընտանեկան դաստիարակության արդի հիմնախնդիրների վերաբերյալ հանրապետության մի շարք բուհերի ուսանողների /Երևան, Տավուշ, Շիրակ, Լոռի/, հանրակրթական դպրոցների բարձր դասարանի աշակերտների, մանկատների երեխաների և անչափահաս օրինախախտների շրջանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

1. Աշխատանքում հոգաբանամանկավարժական խոր վերլուծության են ենթարկվել ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրները տնտեսավարման նոր համակարգի պայմաններում (ընտանիքասիրության անկում, երեխայի վարքագծային շեղումներ, թափառաշրջություն, մուրացկանություն, թմրամոլություն, հարբեցողություն, հանցագործություն, մարմնավաճառություն, մանկական հիվանդություններ, արժեքների վերարժեքավորում):
2. Բացահայտվել են այն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, որոնք խաթարել են ընտանիքում երեխաների դաստիարակության գործընթացը և նրանց առողջ զարգացումը (սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը. բախումներ, անհամադրուղականություն, ծնողների արտագնա աշխատանքը, գործազրկությունը, ոչ բավարար վերահսկողությունը, ընտանիք-դպրոց թույլ կապը և այլն):
3. Սեկնաբանվել են ընտանիքի գործառույթների փոփոխությունները, արժեք-

ների վերաբերյալ որոշումներ (ներկայացվել են ընտանիքի վերարտադրողական, տնտեսական, սոցիալական, դաստիարակչական գործառնությունները և բարոյական արժեքների կորուստն ընտանիքում և հասարակությունում):

4. Տրվել է սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքների նոր բնութագիրը, վերլուծվել դրանք ծնող պատճառներն ու հետևանքները և նրանց անմիջական ազդեցությունը երեխայի անձի ձևավորման ու դաստիարակության վրա (աշխատանքում ներկայացվել են սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքների նորացված դասակարգումը. ա/ ոչ լիակազմ, բ/ամուսնավուծված, գ/ բախումնային):

ՏԵՍԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Չետագոտության հիմնախնդրի տեսական համապարփակ վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրներին առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, պատճառականությունը, բացահայտել հոգեբանամանկավարժական օրինաչափությունները, երեխաների վարքագծային դրսևորումների առանձնահատկությունները: Նորովի են բնութագրվել սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքները, երեխաների դաստիարակությունը նրանցում:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Խնդրի ուսումնասիրության և վերլուծության արդյունքները կարող են օգնել /ծնողներին, մանկավարժներին, իրավապահ մարմիններին/ ընտանիքում երեխաների դաստիարակության հիմնախնդիրների ոչ միայն լուծմանը, այլև դրանց կանխարգելմանը:
2. Հիմնախնդրի նորովի մեկնաբանությունները, դրա վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել «Մանկավարժության» դասընթացի «Ընտանեկան դաստիարակության» բաժնում:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Որպես մեթոդաբանական հիմք են ծառայել դիալեկտիկան, հայ և համաշխարհային մանկավարժության ձեռքբերումներն ու նվաճումները /Վ.Կրասկի, Յու.Սմիռնով, Մ.Գալազուզովա, Ս.Մանուկյան/, դաստիարակության էության և այն կառավարելու անհրաժեշտությունը հիմնավորող դրույթները /Ա.Ս.Մակարենկո, Վ.Ա.Սուխոմլինսկի/, դաստիարակության փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական հայեցակարգերն ու մոտեցումները /Ա.Պետրուկիչ, Գ.Կոլեսնիկովա, Տ.Վասիլկովա, Ա.Սուդրիկ, Ս.Մանուկյան, Հր.Շաքարյան, Մ.Կասպե, Ե.Լոպեզ, Ռ.Գիբսոն, Ջ.Թայլեր/: Որպես մեթոդաբանական հիմք են կազմել նաև «Ընտանիք» սոցիալական կառույցի էության ու բնութագրումների, նրա կենսագործունեության և գործառնությունների վերաբերյալ հայրենական, ռուս և եվրոպացի փիլիսոփաների, մանկավարժների և հոգեբանների մոտեցումները, ինչպես նաև շեղվող վարքը շտկելուն նվիրված գիտնականների դրույթները /Յու.Գասպարյան, Ն.Հարությունյան, Ս.Արզումանյան, Ա.Նալչաջյան, Ի.Վորոժեյկին, Ա.Կիբանով, Վ.Կոնդրաշենկո, Վ.Կովտյով, Ի.Պրոկոպև, Տ.Կուլիկովա, Մ.Գալազուզովա, Ռ.Բայարդ, Թ.Գորդոն, Ֆ.Գելմուտ, Դ.Բարետ/:

ՊԱՇՏՊԱԼՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՉԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅՑՆԵՐԸ

1. Ակնհայտորեն խարխվել են հայ ամուր ընտանիքի հիմքերը, որը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես, մեր երկրի տնտեսավարման նոր համակարգին անցնելու դժվարին ու բարդ գործընթացով:

2. Ընտանեկան դաստիարակության խնդիրներն առավել տազնապալի բնույթ կրեցին հատկապես երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, հասարակության բևեռացման, բարոյական արժեքների արժեզրկման, արևմուտքից ներթափանցած՝ հասարակությունը պառակտող և հոգեմարմնապես հիվանդացնող երևույթների առկայության պայմաններում:

3. Մարդու կյանքի ողջ ընթացքում «ընտանիք» սոցիալական կառույցը չի կորցնում իր վճռորոշ դերակատարությունն անձի ձևավորման ու դաստիարակության, հասարակությունում նրա ինքնահաստատման ու ինքնահարգման, ազգային և համամարդկային արժեքների փոխանցման, քաղաքացիական ինքնագիտակցության և պետական մտածողության ձևավորման հարցերում:

4. «Ընտանիք» սոցիալական կառույցի գործառնությունների փոփոխությունները, ներընտանեկան միջանձնային հարաբերությունների կառույցի խարխիլումը, ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտի խաթարումը երեխաների դաստիարակության նոր հիմնախնդիրների պատճառ համղիսացան:

5. Տնտեսավարման նոր համակարգին անցնելուն հասարակության անպատրաստ լինելը, արդյունքում՝ սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը, գործազրկությունը, արտագնա աշխատանքը, աղքատությունը հանգեցրին ներընտանեկան մեծ բախումների /կոնֆլիկտների/, որոնք և պատճառ դարձան սոցիալ-հոգեբանորեն խաթարված շատ ընտանիքների ձևավորմանը:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- Փիլիսոփայական, մանկավարժական և հոգեբանական հայրենական ու արտասահմանյան գրականության ուսումնասիրություն
- Նյութի գիտատեսական վերլուծություն և համադրություն
- Սոցիոլոգիական հարցում
- Հարցազրույցներ
- Դիտումներ
- Անկետավորում
- Չետագոտության արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական մշակում ու վերլուծություն

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

նա պահովված են հետազոտված համակազմի ընդգրկում քանակակազմով /929/, հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փաստացի նյութի մաթեմատիկական մանրամասն մշակմամբ և հետազոտության արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ:

Չետագոտության տեսական ու գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նաև իրատարակված հոդվածների քանակով, հետազոտության արդյունքների քննարկումներով ու ելույթներով:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ: Չետագոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

Առաջին փուլում /1999-2002թթ./ կատարվել է հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, փիլիսոփայական և հոգեբանական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:

Երկրորդ փուլը /2002-2005թթ./ սոցիոլոգիական հարցումների անցկացում հանրապետության տարբեր բուհերում, դպրոցներում, երեՇՊՀ վարժարանում,

մանկատներում, Աբովյանի քրեակատարողական հիմնարկում:

Երրորդ փուլը /2005-2008թթ./ ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծության և ընդհանրացման հիման վրա աշխատանքի շարադրում:

ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ քննարկվել են ԵՊՀ մանկավարժության ամբիոնի գիտատեսական սեմինարներում, իսկ ամբողջական աշխատանքը՝ ամբիոնի նիստում: Ատենախոսության թեմայի վերաբերյալ հրատարակված է 5 հոդված:

ԱՏԵՆԱՒՃՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային 163 էջ ծավալով: Այն բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից /116 անուն գիրք/, ծավալուն հավելվածից:

Ատենախոսության տեքստը պարունակում է 5 գծագիր, 21 աղյուսակ, 20 գծապատկեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, առաջադիր խնդիրները ու մեթոդները, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հիմնավորված է հետազոտության հավաստիությունը, ինչպես նաև առաջադրված են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության «**Ընտանիքը որպես հասարակության առաջնային կառույց**» խորագրով առաջին գլուխը բաղկացած է 4 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Ընտանիքն ազգի գոյապահպանության կարևորագույն գործոն**», ներկայացվել է հայ ընտանիքը ոչ միայն որպես միջսերնդային ժառանգության կրող ու վերարտադրող, այլև հասարակության սոցիալ-տնտեսական և ազգային-մշակութային գործառնությունների իրականացման հիմնական օղակ: Ընտանիքն այն սոցիալական միջավայրն է, ուր տեղի է ունենում մարդու անձի ձևավորումն ու զարգացումը:

Ժամանակակից գիտության մեջ ընտանիք կառույցի մեկ միասնական բնորոշում չկա: Վերջին տարիներին համեմատաբար հաստատուն է այն տեսակետը, ըստ որի **ընտանիքը սոցիալ-հոգեբանական առանձնահատուկ խմբավորում է, ուր հատկանշական է միջանձնային հարաբերությունների յուրահատուկ համակարգ, որը ղեկավարվում է օրենքներով, բարոյական նորմերով, ավանդույթներով:** Ենթագլխում ներկայացվում են ընտանիքի բնութագրմանը վերաբերող տարբեր մոտեցումներ /Յր.Շաքարյան, Ա.Ադոյան, Ա.Ի.Պետրոսյան, Գ.Ի.Կոլեսնիկովա, Ս.Ի.Գոլոդ, Ա.Ա.Կլեցին, Ա.Գ.Խարչև և այլք/:

«**Ընտանիքն ազգի դիմագիծ**» ենթագլխում քննարկվել են ընտանիքի պահպանման, կայացման ու ամրապնդման, երեխայի մեջ ազգային առանձնահատկություններ սերմանելու և հիմնավորելու գործում մի շարք գործոնների ազդեցությունը /սովորույթ, ավանդույթ, ծիսակատարություն, ծիսակարգ, լեզու, հավատք, պատմություն ու մշակույթ/, որոնք իրենց դերն ու նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերում: Նշյալ գործոնները դաստիարակչական դեր ունեն սերունդների մեջ ազգային ինքնագիտակցության ոգի սերմանելու հար-

ցում /Վ.Բդոյան, Յու.Գասպարյան/: Այս առումով ընտանեկան դաստիարակության գործում ազգային արժեքների ուսումնասիրության խնդիրը ազատական շուկայի պայմաններում ստանում է առանձնահատուկ այժմեականություն:

Հայ ժողովրդի կյանքում առանձնակի դեր ու նշանակություն են ունեցել նաև եկեղեցին և մայրենի լեզուն: Վերջինիս՝ որպես ազգային արժեքի մասին բազմիցս է խոսվել և հիշատակվել ականավոր մանկավարժների ու մտածողների կողմից /Ս.Աբովյան և Ս.Մանդինյան, Ա.Բահաթրյան և Դ.Ադոյան, Յ.Ա.Կոմենսկի և Ի.Գ.Պետրոսյան, Կ.Գ.Ուշինսկի և Վ.Ֆ.Վախտերև և ուրիշներ/, ովքեր տվել են մայրենի դերի բազմակողմանի և խորը վերլուծությունը սերնդի դաստիարակության և ընտանիքի պահպանման գործում: Միանգամայն իրավացիորեն և օբյեկտիվորեն է գնահատվել մեր պատմիչների և ազգագրագետների կողմից նաև հայ եկեղեցու դերը ամուսնա-ընտանեկան ոլորտում: Այն ոչ միայն ազգապահպան գործունեություն է ծավալել, այլև հանդիսացել է հայ ընտանիքի կայացման, կայունացման և ամրության հիմնական երաշխիքներից մեկը /Յ.Սեղավորյան, Վ.Հակոբյան, Ս.Մանդինյան/:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ ենթադրվում միաժամանակ ներկայացվում և վերլուծվում են վերջին տարիներին մեր երկրում հասարակական և սոցիալ-տնտեսական վերափոխումների անբարենպաստ ներգործությունը «ընտանիք» սոցիալական կառույցի վրա: Շուկայական հարաբերությունների անցման անմիջական հետևանք հանդիսացող սոցիալական որոշ երևույթներ /սոցիալական շերտավորում և ծայրահեղ բևեռացում, աղքատություն, գործազրկություն, արտագնացություն/ այսօր իրենց բացասական ներգործությունն են ունեցել ընտանիքի վրա՝ խարխլելով նրա հիմքերը, կայունությունն ու ամրությունը:

Երրորդ՝ «**Ընտանիքի գործառույթները**» ենթագլխում ներկայացվում են ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի մի քանի տեսակներ, ինչպես՝ միջուկային /նուկլեար/, ընդլայնված, ավտորիտար, դեմոկրատական, բազմազավակ, անզավակ ընտանիքներ և այլն:

Առանձնացվում են նաև գիտնականների կողմից առաջադրված «ընտանիք» սոցիալական կառույցի մի քանի գործառույթներ /Մ.Ա.Գալագուզովա, Տ.Ի.Շիրանովա, Տ.Մ.Դավիդենկո, Ռ.Կարապետյան/: Դրանք են՝ պաշտպանական, հուզական, հաղորդակցական, կարգավորող, փոխօգնող, վերարտադրողական, տնտեսական, սոցիալական, դաստիարակչական և այլն:

Ենթագլխում ներկայացվում և վերլուծվում են վերոնշյալներից մի քանիսը, որոնք առավելապես են վերաբերում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը: Հանգամանորեն վերլուծվում են վերարտադրողական, սոցիալական, տնտեսական և դաստիարակչական գործառույթները, նրանց դերն ու նշանակությունը անձի սոցիալականացման գործընթացում:

Միաժամանակ փաստվում է, որ մեզանում կատարվող սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական վերափոխումները հանգեցրել են մի շարք դժվարությունների, բարոյական և այլ արժեքների վերախմաստավորման ու արժեզրկման, որոնք փոխել են հայ ընտանիքի կենսակերպը, խոչընդոտել երեխայի նորմալ զարգացման գործընթացը՝ փոփոխություններ մտցնելով նաև վերոհիշյալ գործառույթներում:

«**Նորովի մոտեցում ընտանիքասիրության հիմնահարցին**» 4-րդ ենթագլխում, որպես կարևորագույն դրույթ, էական նշանակություն է տրվում ընտանիքասիրության դաստիարակության խնդրին՝ հաշվի առնելով աշխարհում կա-

տարվող այն հիմնարար փոփոխությունները, որոնք խորթ են ու անհարիր մեր ազգին և հողի են անցանկալի հետևանքներով:

Այսօր տնտեսավարման նոր համակարգի պայմաններում, ընտանիքասիրության կարևորագույն խնդիրներից մեկն ընտանեկան ավանդական արժեքների վերարտադրումն ու նոր արժեքների սերմանումն է և ներընտանեկան միջանձնային առողջ հարաբերությունների ձևավորումը: Ցանկացած փոփոխություն ինքնին դրական երևույթ է, երբ այն կազմում է բնականոն վերարտադրական գործընթացի մաս: Իսկ եթե փոփոխությունները տեղի են ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգի համախմբիչ դերը: Արդյունքում առավել մեծ դեր են ստանում տարանջատող խմբային, քան համախմբող համընդհանուր արժեքները: Այսօր այնպիսի կարևոր արժեքներ, ինչպիսիք են՝ ընտանիքը, ազգը, հայրենիքը, գիտությունը, պատմությունը, պատմական, մշակութային և բարոյական արժեքները ստորադասվել են այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ փողը, շահը, նյութապաշտությունը, պաշտոնը, եսամոլությունը, անհանդուրժողականությունը և այլն: Այստեղ է, որ կարևորվում է ընտանիքասիրության հարցը, որն այսօր մեզանում խիստ արդիական և հրատապ խնդիր է դարձել:

Առենախոսության երկրորդ գլուխը կրում է «Երեխաների դաստիարակությունն ընտանիքում ազատ շուկայի պայմաններում» խորագիրը, որը բաղկացած է 6 ենթագլխից:

Առաջին՝ «Ազատ շուկայի անցման և երեխաների դաստիարակության հարաբերակցությունը» ենթագլխում խոսելով երեխայի անձի ձևավորման, դաստիարակության և զարգացման հարցում ընտանիքի դաստիարակական դերի մասին՝ անդրադարձել ենք նաև այն վնասներին, որ կարող է հասցնել «ընտանիք» սոցիալական կառույցն իր սխալ գործառույթներով: Բացի այն, որ շուկայական հարաբերությունները խորապես ազդել են ընտանիքի կառուցվածքի, ձևի, գործառույթների ու դերի վրա, նկատելի փոփոխություններ են կրել նաև միջանձնային հարաբերությունները՝ հատկապես ծնող-երեխա փոխհարաբերություններում: Տնտեսավարման նոր համակարգը, սոցիալական նոր երևույթների ի հայտ գալը /գործազրկություն, աղքատություն, հասարակության ծայրահեղ բևեռացում/ հանգեցրին նրան, որ ընտանիքը դարձավ սոցիալապես ամենախոցելին՝ կրելով կառուցվածքային և որակական փոփոխություններ: Այսօր շատ ծնողներ իրենց ընտանիքի կենսագործունեությունն ապահովելու, գոյատևման պատշաճ պայմաններ ստեղծելու համար սկսեցին աշխատել ոչ նորմալ աշխատանքային ռեժիմով՝ վերահսկողությունից դուրս թողնելով իրենց երեխաներին, կա՛մ բռնեցին արտագաղթի ուղին, կա՛մ էլ համալրեցին գործազուրկների ստվար բանակը: Հատկապես լայն թափ ստացավ միգրացիոն գործընթացը, որին վերաբերող հարցերը խորությամբ վերլուծվել են Վ.Ե.Խոջաբեկյանի, Վ.Վ.Բաղդասարյանի և Գ.Հարությունյանի աշխատություններում: Վերահսկողության պակասից, հոգածության թերացումից, անտարբերությունից ու ամենաթողությունից են հատկապես ծնունդ առնում անկարգապահությունը, թափառաշրջությունը, մուրացկանությունը, հանցագործությունն ու թմրամոլությունը անչափահասների շրջանում:

Աշխատանքում անդրադարձել ենք երեխայի դաստիարակության գործում հանդիպող հետևյալ խնդիրներին.

1. Հասարակության կենսամակարդակի կտրուկ անկում՝ կապված նախկին տնտեսակարգի փլուզման հետ:
2. Բախումներն ընտանիքում:
3. Արժեքների վերարժեքավորում:
4. Ծնողական սիրո պակաս, միջանձնային փոխհարաբերությունների ոչ ճիշտ կառուցում:
5. Դաստիարակության գործում երեխայի տարիքային առանձնահատկությունների անտեսում:
6. Ընտանիքում կնոջ /մոր/ և տղամարդու /հոր/ սոցիալական դերերի փոփոխություններ:
7. Երեխաների վարքագծային շեղումներ՝ կապված ընտանիքում սոցիալ-տնտեսական վատ պայմանների, անառողջ մթնոլորտի, դաստիարակական ներգործության թուլացման հետ:

Վերոնշյալ խնդիրների լուծման, ընտանիքի անխափան կենսագործունեությունն ու միջին կենսամակարդակն ապահովելու, երեխայի դաստիարակության, կրթության ու զարգացման գործում ծնողին աջակցելու համար անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ պետության սոցիալական քաղաքականության մեջ:

«Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության խաթարումները տնտեսավարման նոր համակարգի պայմաններում» խորագիրը կրող երկրորդ ենթագլխում նախ ուսումնասիրվել և հանգամանորեն վերլուծվել են այն առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակության գործը կազմակերպելիս: Դրանք են՝ ընտանիքի կազմը, տեսակները, ընտանիքում երեխայի դաստիարակության նպատակն ու խնդիրները, ընտանիքի հնարավորությունները երեխայի զարգացման ու դաստիարակության գործում, ընտանիքում հարցերի լուծման ընդհանրությունը, գործունեության համատեղումը, ծնողների վերաբերմունքը երեխայի նորմալ կրթությունն ապահովելու ուղղությամբ և այլն:

Ենթագլխում դիտարկել ենք նաև այն երևույթները, որոնք ժամանակակից պայմաններում խոչընդոտում են երեխայի նորմալ զարգացման և սոցիալականացման գործընթացը: Դրանք են՝

1. Երկրում սոցիալ-տնտեսական դժվարությունները,
2. Գործազրկությունը,
3. Արտագնացությունը,
4. Ազգային ավանդույթների ու սովորույթների թուլացումը կամ գրեթե անտեսումը,
5. Աղանդավորական շարժման աճը,
6. ՀԼՄ-ների հաճախ ոչ դաստիարակական ներգործությունը և այլն:

Ենթագլխում հիմնավորվում է, որ երեխայի անոմալ զարգացման պատճառները արմատավորված են ընտանեկան դաստիարակության թերություններում, որոնց հաղթահարումը պահանջում է որոշակի համակարգի մշակում և գործադրում, որոնք հնարավորություն կտան վերացնել դաստիարակության գործընթացում առկա բացասական երևույթները, գծերն ու դիրքորոշումները:

«Մանկական հիվանդություններն այսօր» 3-րդ ենթագլխում դիտարկված և բնութագրված են անցումային շրջանում նկատվող առողջության հայեցակետի ձևափոխման խնդիրներ թե՛ անձնական և թե՛ հասարակական մակարդակ-

ներում: Ուսումնասիրությունները վկայում են, որ 33-ում բավարար մակարդակի վրա չի գտնվում բնակչության առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքը /Աղբյուր՝ 33 ԱՎԾ, ՀՏՄ հաշվարկներ/, որն հատկապես ակնառու է սոցիալապես անապահով ընտանիքներում: Բժշկական ծառայություններից օգտվելու հասարակական համընդհանուր անբավարարվածությունը խթանեց մանկական հիվանդությունների և մահացության աճի: Վերջին տարիներին աճի միտում ունեն մանկական այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են սուր վարակիչ, աղիքային ինֆեկցիոն, արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունները, շաքարախտը, սուր շնչառական հիվանդությունները և այլն:

Վերոհիշյալ վիճակը պայմանավորված է ոչ միայն առողջապահական միջոցառումների անբավարար մարկարդակով, այլև ազգաբնակչության սոցիալ-տնտեսական, նյութական ծանր պայմաններով: Այսօր շատ ընտանիքներ հայտնվել են այնպիսի ծանր սոցիալական վիճակում, ուր հաց վաստակողը երեխան է: Վերջիններս «աշխատում են» աղքատությունում կամ ստիպված են լինում տեղափոխել իրենց օրգանիզմի համար անթույլատրելի ծանրություն: Ձարմանալի չէ, որ այս երեխաների մեծ մասը տառապում է մաշկային և շնչառական հիվանդություններով:

Երևոյթն ինքնին խիստ անհանգստացնող էր և պահանջում էր հարցի լուծման ու կարգավորման համար անհրաժեշտ պետական հոգածություն և համապարփակ մոտեցում: Այդպիսի մոտեցում է 33 առողջապահության նախարարության 2005թ. դեկտեմբերի 27-ի որոշումը, որի համաձայն 2006թ. հունվարի 1-ից ամբուլատոր-պոլիկլինիկական առաջին բուժօգնությունը 33 բոլոր քաղաքացիներին տրվում է անվճար: Վերոհիշյալ որոշումը կարևոր քայլերից մեկն է ընտանիքների առջև ծառայած բազում խնդիրների լուծման ճանապարհին:

Չորրորդ ենթագլխում՝ «**Թափառաշրջիկության և մուրացկանության հիմնահարցը Հայաստանում**», կանգ ենք առել տնտեսավարման նոր համակարգի պայմաններում անչափահասների շրջանում հաճախակի հանդիպող թափառաշրջության և մուրացկանության խնդրին:

Դաստիարակության գուժառույթի խախտման, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտի առկայության պատճառով, ինչպես նաև կտրվելով կրթատարակչական գործընթացից, դուրս մնալով ծնողների և մանկավարժների ուշադրությունից՝ շատ երեխաներ այսօր հայտնվել են փողոցում՝ լրացնելով թափառաշրջիկների և մուրացիկների բանակը: Վերջիններս ոչ միայն ծնողազուրկ երեխաներն են, այլև տուն ու ծնողներ ունեցողներ /2008թ. առաջին եռամսյակի վիճակագրական տվյալների համաձայն Երևան քաղաքում հաշվառման մեջ են 540 մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասներ/:

Ենթագլխում ներկայացվում է հանգամանորեն վերլուծվում են այն ծանրակշիռ դրդապատճառները, որոնք մղում են երեխային փողոցային կյանքի:

Ներկայումս մեր երկրում գործում են հատուկ հաստատություններ, ուր ապրում և սովորում են միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ թափառաշրջիկ երեխաներ, կան մի շարք հասարակական կազմակերպություններ, բարեգործական միություններ, որոնց աշխատանքներն ուղղված են օգնելու սոցիալական տարաբնույթ խնդիրներ ունեցող, ռիսկային խումբ հանդիսացող այս անչափահասներին, ինչպես նաև նրանց ընտանիքներին երեխայի դաստիարակության հարցում: Այս առումով մեծ ներդրում ունեն ՀՅԺ-ի «Աջակցու-

թյան կենտրոնը», Կոտայքի մարզի SOS մանկական գյուղը, Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատունը, Նուբարաշենի թիվ 18 հատուկ կրթահամալիրը, «Ձատիկ» մանկատունը, «Օրբան» բարեգործական միությունը և այլն, որոնց գործունեության հանգամանալից բնութագիրը դիտարկված է այս ենթագլխում:

Խնդրո առարկան պետական հոգածության կենտրոնում է: Այստեղ պետք է միասնական գործեն ընտանիքները, դպրոցները և իրավապահ մարմինները: Այդ է վկայում մի քանի նախարարությունների /կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, ոստիկանության/ համատեղ գործունեության արդյունքում գործող «Արագիլ» ծրագիրը, որում ընդգրկված նախարարությունների միասնական աշխատանքների նպատակն է հնարավորինս նվազեցնել և վերացնել թափառաշրջությունն ու մուրացկանությունը անչափահասների շրջանում:

Երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ «**Իրավախախտումներն անչափահասների շրջանում**», բացահայտվում է իրավախախտ անչափահասների հանցավորության պատճառականությունը, որը պայմանավորված է հատկապես վերջին տասնամյակում երկրում տեղի ունեցող վերափոխումների, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, չգարգացած տնտեսության, գործազրկության, արտագնա աշխատանքի, երեխաների սոցիալական և իրավական անպաշտպանվածության հետ:

Վերջին տասնամյակի քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրադարձություններն ուղղակիորեն ազդեցին ընտանիքի սոցիալական և տնտեսական գործառնությունների վրա, դրանով իսկ երեխայի ապրելակերպի՝ սննդի, հանգստի ռեժիմի, կրթության, ֆիզիկական և հոգևոր զարգացման վրա՝ պատճառ դառնալով անցանկալի երևույթների՝ ընդհուպ մինչև իրավախախտումների: Այս առումով հատկապես հետաքրքրական են հայրենական և արևմտյան հեղինակների առաջադրած մի շարք մոտեցումները, որոնք փորձել են մեկնաբանել որոշ ընտանիքների ոչ նորմալ կենսագործունեության ազդեցությունը դեռահասների իրավախախտ վարքի ձևավորման վրա: Մասնավորապես, դիտարկված են ճանաչված քրեաբաններ Ջ.Ռոտերի, Կ.Լորենցի, Է.Գյուկի, քրեահոգեբան Վ.Վասիլևի, ռուս գիտնականներից Վ.Ցեյուկոյի, Վ.Կոնդրաշենկոյի, Վ.Կորոյովի, Մ.Կոլյադայի, Լ.Ս.Կոլեսովայի, Ս.Սիբիրյակովի, հայ իրականության մեջ Ն.Հարությունյանի, Ս.Արզումանյանի, Է.Գրիմի իրավախախտ երեխաների դաստիարակության հարցերին վերաբերող տեսակետները:

Հիմնավորվում է, որ ոչ մի երեխա օրինախախտ չի ծնվում, այլ այդպիսին է դառնում սխալ դաստիարակության, թույլ վերահսկողության, անուշադրության, ընտանիքի սոցիալական ծանր պայմանների, ծնողների անբարո վարքի, հակաիրավական կենսակերպի, բռնության պատճառով:

Ատենախոսության մեջ երեխայի սոցիալականացման գործընթացի հիմքերի խարխլման և, որպես հետևանք, նրա վարքի խեղմանը նպաստող հիմնարար գործոնները ենթարկվել են հոգեբանամանկավարժական վերլուծության և ամփոփ ձևով ներկայացվել գծագրերում:

«**Թմրամոլությունը, հարբեցողությունը, մարմնավաճառությունն ու մարդավաճառությունը անչափահասների շրջանում**» 6-րդ ենթագլխում դիտարկվել և քննարկվել է հասարակությունում ամենասուր և ամենավտանգավոր խնդիրներից մեկը՝ թմրամոլության օգտագործման տարածումն անչափա-

հասների շրջանում: Թմրամոլությունը զարգացում ապրող, խրոնիկ հիվանդություն է որն առաջանում է թմրանյութերի օգտագործման և չարաշահման հետևանքով: Ըստ թմրագետների կարծիքի /Ս.Բ.Չայցև, Ֆ.Է.Շերգեր, Բ.Ա.Նիկիֆորով, Բ.Ս.Բիտենսկի և այլոք/՝ թմրամոլությունը գրեթե անբուժելի է:

- Դիտարկված են դեռահասության շրջանում թմրամոլության պատճառները.
- Բիոֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ կապված թմրանյութերի օգտագործման ժառանգական հակվածության, գենետիկորեն փոխանցված հատկության հետ,
 - Ընտանիքի հետ ունեցած բախումներն ինքնուրույն հարթելու անկարողությունը,
 - Անհաջողությունները կրթության բնագավառում,
 - Թմրամաֆիայի նկատմամբ հետաքրքրության մեծացումը,
 - Բացասական ապրումների /նյարդային ցնցում, սթրես/ չեզոքացումը,
 - «Չեղինակություններին» մամուլելու ձգտումը և այլն:

Աշխատանքում դիտարկված և բնութագրված են նաև Ռուսաստանի Դաշնությունում մշակված դեռահաս թմրամոլների հետ տարվող աշխատանքների նոր տեխնոլոգիաներ, որոնցից աչքի է ընկնում հատկապես **Ինֆորմացիոն տեխնոլոգիան** /մշակվել է Սամարայում/: Թմրամիջոցների ներարկային օգտագործումը կարող է հանգեցնել նաև մեկ այլ վտանգավոր երևույթի՝ ՄԻԱՎ-ով վարակմանը: Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ի վարակի փոխանցման ուղիների 41,9%-ը թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով է /Ադբյուր՝ ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն/: Քանի որ երևույթը լայն տարածում է գտել մեր երկրում, ուստի արդիական է դառնում դեռահաս թմրամոլների համար ոչ միայն բժշկական, հոգեբանական աջակցությունը, այլև սոցիալական մանկավարժի աշխատանքի կազմակերպումը դպրոցում:

Վերջին տարիներին նկատելիորեն աճել է նաև անչափահասների կողմից ոգելից խմիչքների օգտագործումը, որոնց նկատմամբ հակվածության պատճառները կապված են ինչպես սոցիալական, ընտանեկան անբարենպաստ պայմանների, այնպես էլ հասակակիցների շրջանում ինքնադոստորման, ինքնահաստատման հետ: Դեռևս մեծ տոկոս են կազմում ակտիվ ազդեցության տակ դեռահասների կողմից կատարվող հանցագործությունները /խուլիգանություն, կողոպուտ, ավազակային հարձակում/:

Գործող օրենսգրքով ոգելից խմիչքներ չարաշահող անչափահասները՝ կախված տարիքից, հարթածության աստիճանից, ենթարկվում են վարչական պատասխանատվության: Մինչև 18տ. անչափահասի ոգելից խմիչքի օգտագործման, չարաշահման և հակահասարակական վարքի համար պատասխանատու են նաև ծնողները: Վերջինս ամրագրված է նաև ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» Հռչակագրում /1959թ./, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում /1996թ./ և ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» Համաձայնագրում՝ ընդունված 1989թ. նոյեմբերի 20-ին:

Ենթազխում քննարկվել և բնութագրվել է նաև մարմնավաճառության և մարդավաճառության հիմնահարցը անչափահասների շրջանում: Այսօր վերոհիշյալ երևույթները կարելի է համարել հասարակության սոցիալական, տնտեսական և բարոյական խեղման արդյունք:

Նշյալ երևույթների տագնապեցնող աճի համար գոյություն ունեն բազմաթիվ խորքային պատճառներ, որոնց հանգամանակից վերլուծությունը տրված է

ատենախոսության մեջ:

Աշխատանքի երրորդ՝ «**Դաստիարակության հիմնահարցերը սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներում**» վերնագրով գլուխը բաղկացած է 3 ենթազխից:

Առաջին ենթազխիցը՝ «**Ոչ լիակազմ ընտանիքներ, դրանք ծնող պատճառները**», նվիրված է Հայաստանի այսօրվա հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական իրադարձություններից ելնելով որոշ հայ ընտանիքներում կառուցվածքային և որակական փոփոխությունների լուսաբանման ու ծնող պատճառների հիմնավորմանը: Դրանք ոչ լիակազմ ընտանիքներն են, ուր բացակայում է ընտանիքի անդամներից մեկը: Նշյալ ընտանիքներում լիակազմության խախտումն առաջացրել է նոր խնդիրներ, սոցիալական դերերի ու պարտականությունների փոփոխություններ:

Հիմնական պատճառներից առանձնացրել ենք հետևյալները՝ ամուսնալուծությունը, դավաճանությունը, դժբախտ պատահարները, պատերազմը, բնական աղետները, անզավակությունը, արտագնա աշխատանքը և այլն:

Քննարկելով և հիմնավորելով ընտանիքների ոչ լիակազմության պատճառականությունը՝ ուսումնասիրվել և հանգամանորեն բնութագրվել են նաև ոչ լիակազմ /անբարենպաստ/ ընտանիքների սահմանմանը վերաբերող հայ և ռուս գիտնականների մոտեցումները /Ն.Հարությունյան, Ն.Երշովա, Լ.Շենյդեր, Տ.Պոդուբնայա, Ա.Պոդուբնի և այլոք/:

Ոչ լիակազմ ընտանիքների դասակարգումն առաջին անգամ մեզանում տրվել է դոկտոր Ն.Հարությունյանի կողմից: Դեռևս 1992թ. իր «Խաթարված ընտանիքները և նրանց հետևանքները» հոդվածում նա առաջինն էր, որ օգտագործեց «սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներ» եզրույթը: Ըստ Ն.Հարությունյանի դասակարգման՝ աշխատանքում տարբերակել ենք ոչ լիակազմ ընտանիքների 3 առավել տարածված տեսակ /դժբախտ պատահարների, բնական աղետների և պատերազմների հետևանքով, ամուսնալուծության և միայնակ մոր կամ հոր կարգավիճակով/: Առանձնացվել և քննարկվել է յուրաքանչյուր խումբ՝ տալով նրանում մեծացող երեխաների հոգեբանամանկավարժական բնութագիրը:

Երրորդ զխի երկրորդ՝ «**Ամուսնալուծված ընտանիքներ, դրանք ծնող պատճառները**» խորագիրը կրող ենթազխում դիտարկվում են ժամանակակից պայմաններում ամուսնալուծության բնույթը, դրդող պատճառներն ու հետևանքները: Հատկապես խնդիրն առավել բարդ է այն դեպքում, երբ շոշափում է երեխայի շահերը:

Հիմնավորվել է, որ ամուսնալուծությունները բացասաբար են անդրադառնում հիմնականում երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացների վրա:

Տնտեսավարման նոր համակարգի պայմաններում ամուսնալուծությունների պատճառների շարքում աշխատանքում դիտարկվում են մի շարք գործոններ՝ կենսակերպի կտրուկ փոփոխությունը, երկրի սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, արտագնացությունը, ընտանիքում ամուսինների սոցիալական կարգավիճակի փոփոխությունը /Վ.Ցելուկո, Լ.Շենյդեր, Օ.Պոլիտորովա/, ինչպես նաև՝ ամուսնական դավաճանությունը, խանդը, բնավորությունների անհամապատասխանությունը, անպտղությունը, շահի վրա հիմնված ամուսնությունը, սեռական անհամատեղելիությունը բախումնային իրավիճակներն ընտանի-

քում, մեծերի անտեղի միջամտությունը, սեփական կարիերայով տարվելը, հարբեցողությունն ու թմրամոլությունը, աղանդներին հարելը և այլն:

Ենթազխում մեկնաբանվում են նաև ամուսնալուծությունների թողած հետևանքները:

Աշխատանքում դիտարկվում է նաև արյունակցական և խառնազգի ամուսնությունների խնդիրը: Ընտանիքը, լինելով ազգի պահպանման կարևորագույն օղակ, կոչված է իր ներսում իրականացնել մատաղ սերնդի ազգային-բարոյական դաստիարակությունը: Մինչդեռ ընտանիքի ապագայնաճումը, որն իրականացվում է արյունախառնության և օտար բարքերի ընդօրինակման ձևով, կործանարար է դառնում ազգի հետագա գոյության համար:

Այսօր ամուսնալուծության կանխարգելման բազմաթիվ տեսակետներ են ներկայացվում և իրականացվում են միջոցառումներ՝ կապված երկրի սոցիալ-տնտեսական, պետական-քաղաքական կարգավիճակը բարելավելու, ընտանիքի նկատմամբ պետական հոգածությունն ապահովելու ուղղությամբ: Այս առումով ուշագրավ է ամուսնական պայմանագրի գոյությունը, որը դեռևս հայ իրականության մեջ լայն տարածում չի գտել: Վերջինս փաստաթուղթ է, ուր «որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները՝ ամուսնության և /կամ/ այն լուծվելու ընթացքում»¹: Պայմանագիրը, կարծում ենք, կլուծի ամուսնալուծությունից հետո ծագած շատ խնդիրներ: Հատկապես այն անհրաժեշտ է առաջին հերթին երեխայի խաղաղ կյանքն ապահովելու համար՝ զերծ պահելով նրան ավելորդ հոգեբանական և բարոյական սթրեսներից:

Երրորդ գլխի երրորդ ենթազխում՝ «Բախումնային ընտանիքներ, դրանք ծնող պատճառները», մեկնաբանվում են ամուսնական հարաբերություններում ծագած դժվարություններն ու խնդիրները, որոնք ոչ միշտ են հարթվում, ճիշտ լուծում ստանում: Նրանց մի մասը խորանալով՝ վերածվում է լուրջ հակասությունների՝ պատճառ դառնալով ընտանիքում միջանձնային բախումների:

Ներկայացվել է ընտանիքում բախումնային իրավիճակների դրսևորման 2 ձև՝ թաքնված և բաց, ինչպես նաև հանգամանորեն վերլուծվել են ժամանակակից ընտանիքներում բախումների պատճառներն ու հաղթահարման ուղիները: Պատճառներից հատկապես լայն տարածում են գտել սոցիալ-տնտեսական ծանր պայմանները /գործազրկություն, բնակարանային խնդիրներ, ընտանեկան բյուջեի ձևավորման հարցում տարածայնություններ/, բնավորությունների անհամապատասխանությունը, փոխադարձ սիրո և հարգանքի պակասը կամ բացակայությունը, ամուսնական դավաճանությունը, խանդը, ընտանիքում կնոջ և տղամարդու սոցիալական դերային գործառույթների փոփոխությունները, աղանդները, թմրամյութ կամ ալկոհոլ օգտագործելու սովորությունը, երեխայի դաստիարակության խնդրում ծագած տարածայնությունները, երկու կողմերի ծնողների անտեղի միջամտությունները և այլն, որոնք գծապատկերների տեսքով ներկայացված են ենթազխում:

Աշխատանքում համեմատական կարգով առանձնացվում են նաև բախումնային /անբարենպաստ/ և ոչ բախումնային /բարենպաստ/ ընտանիքներն իրենց առանձնահատկություններով՝ անդրադառնալով նրանցում մեծացող երեխաների հոգեվիճակի, դաստիարակության և զարգացման խնդիրներին:


¹ ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հոդված 27, Երևան, 2008, էջ 19:

Ատենախոսության 4-րդ գլխում՝ «Ընտանեկան դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ սոցիոլոգիական հիմունքների արդյունքների վերլուծություն», վերլուծվել են սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Սոցիոլոգներ են կատարվել Երևանի և հյուսիս-արևմտյան մի շարք քաղաքների /Գյումրի, Վանաձոր, Իջևան/ պետական մասնավոր բուհերում, հանրակրթական դպրոցներում, ԵրԾՊՀ հենակային վարժարանում, մանկատներում և Աբովյանի քրեակատարողական նախարարությունում: Հարցումներն իրականացվել են ինչպես հանրակրթական դպրոցների բարձր դասարանների և վարժարանի աշակերտների, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների հետ:


Սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա կազմվել է կայունների համակարգչային բազա, որը հիմք է հանդիսացել ինչպես վիճակագրական վերլուծության, այնպես էլ համակարգչային գծապատկերների ստանման համար: Համակարգչային բազայի ստեղծումը և թվերի գրաֆիկական ներկայացումը կատարվել է Microsoft Access և Microsoft Excel ծրագրերի միջոցով:

Հարցման մասնակիցների ընդհանուր թիվը կազմում է 929 մարդ, որից 13-ը աշակերտներ են, մանկատան ու քրեակատարողականի սաներ, 816 բուհի ուսանողներ: Հարցման նպատակն է պարզել մասնակիցների վերաբերմունքը և զնահատականը ժամանակակից պայմաններում «ընտանիք» սոցիոլոգիական կառույցի և նրա առջև ծառայած հիմնախնդիրների վերաբերյալ:

Աշխատանքում ներկայացվում է ինչպես հարցումներին մասնակցությունը՝ ըստ քաղաքների, բուհերի, դպրոցների, Աջակցության կենտրոնի, մանկատների ու քրեակատարողական հիմնարկի, այնպես էլ հարցատրուսների լուրս-քանցյուրի /13 հարց/ արդյունքների վերլուծությունը՝ աղյուսակներով՝ գծապատկերներով:




Հարցումների մասնակցությունը ըստ հանրապետության քաղաքների:




Հարցումների մասնակցությունը ըստ հանրապետության դպրոցների /Երևանի թիվ 10, Աշտարակի թիվ 97 դպրոցներ/, ԵրԾՊՀ հենակետային վարժարանի և Աբովյանի Քրեակատարողական հիմնարկի, մանկատների, ՀՕՖ-ի Աջակցության կենտրոնի:


Ըստ տրված պատասխանների՝ ենթագլխում խմբավորվել և վերլուծվել են արժեհամակարգի փոփոխման պայմաններում ընտանիքի առջև ծառայած այսօրվա հիմնախնդիրները՝ շեշտը դնելով երեխաների դաստիարակության հարցերին և անունալուծության պատճառներին՝ առանձնացնելով դրանցից առավել լայն տարածում գտածները:



Ընտանիքասիրության թուլացման վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքները:



Հարցումներ ընտանիքի կազմի /լիակազմ, ոչ լիակազմ, բախում/ վերաբերյալ:



Ընտանիքի կենսակերպի /ավանդական կամ ժամանակակից-եվրոպական/ ընտրության խնդրի շուրջ:

Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, որոնք առենախտության հիմնախնդրի հանգամանակից ու խորը վերլուծության արդյունքներն ու դրանցից բխող եզրահանգումներն են.

1. Հիմնախնդրի տեսական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տնտեսավարման ազատ շուկայի համակարգին անցած գրեթե բոլոր երկրներում էլ «ընտանիք» սոցիալական կառույցը հանդիպել է լուրջ հիմնախնդիրների և փնտրել է տարբեր ուղիներ դրանք հաղթահարելու համար:
2. Ժամանակակից պայմաններում մեր հասարակության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական վերափոխումներն իրենց կնիքն են դրել «ընտանիք» սոցիալական կառույցի կենսագործունեության և գործառույթների վրա՝ խորապես վնասելով երեխաների դաստիարակության, նրանց անձի ձևավորման գործին՝ սոցիալականացման համատեքստում:
3. Հասարակական ճգնաժամները, սոցիալ-տնտեսական խորքային փոփոխությունները հանգեցրել են արժեքների վերաբեքավորման, բարոյական արժեքների, ընտանիքասիրության անկման, ընտանիքների կառուցվածքի փոփոխման, ներընտանեկան միջանձնային հարաբերությունների խեղման, երեխաների հակաիրավական արարքներին:
4. Ժամանակակից հայ ընտանիքում երեխայի դաստիարակության հիմնախնդիրների հիմքում ընկած են մի շարք գործոններ (երկրի սոցիալ-տնտեսա-

կան պայմաններ, գործազրկություն, աղքատություն, արտագնա աշխատանք, արժեքների վերաբեքավորում, թմրամոլություն, ...), որոնցից յուրաքանչյուրն իր բացասական ներգործություն է ունեցել ընտանիքի առողջ կենսագործունեության վրա՝ վնասելով երեխաների առողջությանը, ապրելավերպին, վարքագծին, դաստիարակությանը, նրանց անձի ձևավորմանը՝ սոցիալականացման համատեքստում:

5. Երկրում քաղաքական և տնտեսական հիմնախնդիրները պատճառ հանդիսացան սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքների աճին (ոչ լիակազմ, անունալուծված, բախումնային), որոնց ոչ նորմալ կենսագործունեությունը, նրանցում բարոյահոգեբանական մթնոլորտի լարումը վնասեցին երեխաների դաստիարակության գործին:
6. Այսօր առավել է կարևորվում ընտանիք-դպրոց-առողջապահական հիմնարկ-իրավապահ մարմին քառակողմ համագործակցությունը՝ նոր ձևերով ու մեթոդներով, հիմքում ունենալով պետության հստակ սոցիալական քաղաքականությունը:
7. Սոցիոլոգիական հարցումների արդյունքների ընդհանրացումը թույլ է տալիս եզրահանգելու, որ ընտանիքի առջև ծառայած հիմնախնդիրների, մասնավորապես ընտանեկան դաստիարակության հիմնախնդրի համալիր լուծման համար անհրաժեշտ է հանրապետությունում ստեղծել «Ընտանիք» սոցիալ-հոգեբանամակավորակա հետազոտությունների և աջակցության կենտրոն, որը կարող է իրականացնել ինչպես վերականգնողական, այնպես էլ կանխարգելիչ գործառույթներ:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլվել են հետևյալ հրապարակումներում

1. Աշիկյան Ա.Ա., Անունալուծված ընտանիքները և դրանց թողած հետևանքները, «Մանկավարժական միտք», Երևան, 2001թ., N 3, էջ 143-149:
2. Աշիկյան Ա.Ա., Երեխաների դաստիարակության խնդիրներն ազատ շուկայի պայմաններում, «Կանթեղ» գիտ. հոդված. ժողովածու, 2001թ., N3, էջ 77-85:
3. Աշիկյան Ա.Ա., Ընտանիքի՝ որպես հասարակության առաջնային կառույցի գործառույթները, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2005թ., N1-2, էջ 60-64:
4. Աշիկյան Ա.Ա., Ընտանեկան դաստիարակության մի քանի հարցերի շուրջ, «Մանկավարժական միտք», 2008թ., N2-3, էջ 122-129:
5. Աշիկյան Ա.Ա., Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն, «Մանկավարժական միտք», 2009թ., N1-2, էջ 104-112:

АШИКЯН АРМЕНУИ АШОТОВНА
ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СЕМЕЙНОГО ВОСПИТАНИЯ В УСЛОВИЯХ
НОВОЙ СИСТЕМЫ ХОЗЯЙСТВОВАНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 22-го октября 2009 года в 14⁰⁰ на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 375010, Ереван, ул. Тигран Меци-17.

РЕЗЮМЕ

Актуальность темы

Независимая и суверенная Республика Армения, избравшая путь системных изменений, перешедшая на новую систему хозяйствования, регулируемого рыночными отношениями, наряду с некоторыми достижениями вынуждена преодолевать возникшие перед ней многочисленные и различные трудности: Глубинным изменениям подвергались почти все структуры, в том числе и одна из важнейших социальных структур – семья.

В данной диссертации сделана попытка выявить и проанализировать современные проблемы, имеющие место в социальной структуре «семья», ее функциональные изменения, конфликты, имеющиеся в межличностных отношениях, задачи, связанные с воспитанием ребенка, а также представить процесс переоценки ценностей в условиях свободного рынка. В этот поворотный исторический период освещением и анализом именно указанных проблем семейного воспитания обусловлена важность и актуальность темы диссертации.

Одновременно сделана попытка представить историю перемен социально-экономической и общественной жизни республики за прошедшие более чем 18 лет, а также непосредственное влияние последних на процессы регулирования межличностных отношений в семье, формирования и социализации личности ребенка.

Задача диссертации становится важной также и тем, что сегодня происходит бурный процесс переоценки национальных ценностей, и в семью проникают чуждые нашей нации явления, которые представляют серьезную опасность как для прочности семьи, так и сохранения нации. И по нашему глубокому убеждению, армянский народ, армянская семья были и будут стойкими благодаря своим национальным ценностям, традициям и обычаям. Новые ценности получают дух только на национальной основе.

Цель исследования

Выявить и проанализировать современные проблемы семейного воспитания в Республике Армения в условиях новой системы хозяйствования – предложив новые пути и способы их решения.

Научная новизна исследования

1. В работе глубококому психологопедагогическому анализу подвергнуты проблемы семейного воспитания в условиях новой системы хозяйствования.
2. Выявлены те объективные и субъективные причины, которые ущемляли процесс воспитания детей в семье и их здоровое развитие.
3. Интерпретированы изменения функции семьи, процесс переоценки ценностей.
4. Дана новая характеристика социально-психологически ущемленных семей, проанализированы побуждающие их причины, результаты и их непосредственное влияние на формирование личности и воспитание ребенка.

Теоретическое значение исследования

Теоретический всесторонний анализ проблемы исследования дал возможность выявить объективные и субъективные факторы, причинность проблем семейного воспитания, выявить психологопедагогические закономерности, особенности поведенческих проявлений детей. По-новому охарактеризованы социально-психологически ущемленные семьи, воспитание детей в них.

Практическое значение исследования

1. Результаты исследования и анализа задачи могут помочь /родителям, педагогам, правоохранительным органам/ не только решению проблем воспитания детей в семье, но и их предотвращению.
2. Новые интерпретации проблемы, результаты ее анализа могут быть использованы в разделе «Семейное воспитание» курса «Педагогика».

Апробация результатов исследования были рассмотрены в научных семинарах кафедры педагогики ЕГУ, а работа в целом – на заседании кафедры.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 4-х глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликованы 5 статей.

21. 21. 21. 21. 21.

05.02.2013

1. Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին: Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին: Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին:

2. Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին: Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին: Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին:

3. Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին: Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին: Ինչպե՞ս կարելի է հասնել նպատակին:

ՀՀ Ազգային գրադարան

NL1762155

